«Սևանի Հացամթերքների Արտադրական միավորում» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գույքի կրկնաճուրդի կազմակերպման և անցկացման մասին

2026-11-24 17:03:19

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

28.07.2026թ. ժամը 14.00-ին «Սևանի Հացամթերքների Արտադրական միավորում» ՍՊԸ-ի սնանկության գործով հայտարարված գույքի աճուրդային վաճառքը չի կայացել հայտեր չլինելու պատճառով:
11.12.2026թ. ժամը 14.00-ին «Սևանի Հացամթերքների Արտադրական միավորում» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարչի կողմից ք. Երևան, Տիչինա 29/2, 2-րդ հարկ, 1206 սենյակ հասցեում կանցկացվի սնանկ ճանաչված «Սևանի Հացամթերքների Արտադրական միավորում» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գույքի բաց դասական եղանակով աճուրդ: Վաճառքի է հանվում.
1. Խումբ 1- Տեխնոլոգիական սարքավորումներ, կառուցվածքներ 117 լոտեր, 45.188.339 ՀՀ դրամ ընդհանուր մեկնարկային գնով:
2. Խումբ 2- Հաստոցներ, օժանդակ սարքեր-սարքավորումներ 7 լոտեր, 11.971.298 ՀՀ դրամ ընդհանուր մեկնարկային գնով:
Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝ ա/ ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ պետական գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները, բ/ աճուրդին մասնակցության և նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթերը: Մասնակցության վճարը և նախավճարը կազմում են մեկնարկային գնի 1 և 5 տոկոսները համապատասխանաբար: Մասնակցության վճարը և նախավճարը վճարվում են փոխանցումով՝ ‘Սևանի Հացամթերքների Արտադրական միավորում» ՍՊԸ-ի ‘Հայէկոնոմբանկ’ ԲԲԸ Տիգրան Մեծ մասնաճյուղ հ/հ 163288033596 սնանկության հատուկ հաշվին՝ մինչև աճուրդին նախորդող օրը ներառյալ: Աճուրդին մասնակցել ցանկացողները, ընդհուպ մինչև աճուրդին նախորդող օրվա ժ.16.00-ը կարող են հայտ ներկայացնել ՀՀ Սնանկության դատարան՝ ք. Երևան,Օտյան 53/2 հասցեով: Աճուրդում հաղթող մասնակից է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Աճուրդում հաղթած և աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրած անձը

պարտավոր է վճարել լոտի վաճառքի գինը արձանագրությունը ստորագրելուց հետո՝ 10/տաս/ օրվա ընթացքում՝ նվազեցնելով վճարված նախավճարի չափը։ Նշված ժամկետում վաճառքի գինն ամբողջությամբ չվճարելու դեպքում աճուրդը համարվում է չկայացած, իսկ աճուրդի հաղթողի կողմից վճարված նախավճարը և մասնակցության վճարը չեն վերադարձվում։ Գույքի առուվաճառքի պայմանագրի կնքման, գույքը գնորդին փոխանցելու, շարժական գույքի տեղափոխման ծախսերը և պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ այլ (ցանկացած տեսակի) ծախսերը և գործողությունները կատարվում են աճուրդի հաղթող ճանաչված մասնակցի կողմից՝ իր ուժերով և միջոցներով։ Գույքերի վերաբերյալ հայտնվում է հետևյալ տեղեկությունները՝1,2 խմբերի լոտերը հանդիսանում են ‘Սևանի Հացամթերթների արտադրական միավորում» ՍՊԸ-ի պարտավորությունների կատարման ապահովման համար գրավադրված գույքեր ‘Հայէկոնոմբանկ’ ԲԲԸ-ում։ Գույքին ծանոթանալու, դրա մասին այլ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև աճուրդի կանոնակարգին ծանոթանալու համար ցանկացողները կարող են զանգահարել ‘Սևանի Հացամթերքների Արտադրական միավորում» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Ղահրամանյանին /091/48-40-05 հեռախոսահամարով։

37491484005

xachaturlaw@gmail.com

ք. Երևան, Շահումյան 16 փող. 80տ.